Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր թիվ 33 __

Օբյեկտի պահպանության իրականացման և նրա տարածքում
հասարակական կարգի ապահովման մասին

<< 01 >> 01 2016թ.

Գավառի պահպանության բաժանմունք
ՀՀ Ոստիկանության ՊՊԳՎ ----------
ստորաբաժանման անվանումը

ՊԲ-ի պետի ժ/պ, ոստիկանության ավագ լեյտենանտ՝ Վահագն Վահանի Սարգսունց
ի դեմս ----------
պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը

/այսուհետև՝ <<Պահպանություն>>/ մի կողմից և ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ աշխատակազմի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման արխիվ

հիմնարկ-ձեռնարկության անվանումը

ի դեմս ղեկավար՝ Վ. Վարդանյան
պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը

/այսուհետև՝ <<Տնտմարմին>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ԸՆԴԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. <<Տնտմարմինը>> հանձնում, իսկ <<Պահպանությունը>> ընդունում / իրականացնում է/ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ աշխատակազմի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման արխիվ ք. Գավառ Բունիաթյան 2
նշել օբյեկտի անվանումը և հասցեն

պահպանությունը կամ հասարակական կարգի ապահովումը նրա տարածքում:

1.2. Օբյեկտի պահպանության կամ նրա տարածքում հասարակական կարգի պահպանության համար <<Պահպանությունը>> իրականացնում է ԿՊԴ-ի միջոցով, 1/16 ժամյա պահպանությամբ, երեկոյան ժամը 18.00 մինչև առավոտյան ժամը 9.00:

1.3 Օբյեկտի պահպանության կամ նրա տարածքում հասարակական կարգի ապահովման համար << Տնտմարմինը>> վճարում է վարձ /այսուհետև պահպանության վարձ/, որի գումարը
ըստ սույն պայմանագիրը կնքելու պահին գործող տարիֆների կկազմի ամսական
70000 /յոթանասուն հազար/ դրամ:

1.4. Պահպանության վարձի վճարումները <<Տնտմարմինը>> կատարում է ամեն ամիս մինչև հաջորդ ամսվա 5-ը ներառյալ; Նշված ժամկետի խախտման համար <<Տնտմարմնից>> գանձվում է տուգանք պայմանագրային ամսական գումարի 0,5 տոկոսի չափով;

22-ում սահմանված կարգով աշխատավարձի, ինչպես նաև զինծառայողների հատուկ կոչումների դրույքաչափերի փոփոխման դեպքում պայմանագիր կողմերը իրավասու են համատեղ քննարկել պայմանագրային գումարի չափը, որի մասին պայմանագրում կարող է կատարվել համապատասխան փոփոխություն;

1.5. Գողության կամ այլ ոտնձգությունների հետևանքով <<Տնտմարմնի>> գույքի հափշտակման, ոչնչացման կամ վնասման /ներառյալ հրկիզման միջոցով/ դեպքում կողմերը կատարում են օբյեկտի համատեղ գույքագրում, պարզվում է կողմերից մեղավորն և պատճառված վնասի հաշվարկ:

1.6. Նյութական վնասի հատուցման մասին պահանջը քննարկվում է 22 օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում;

1.7. Սույն պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև ծագած վիճելի հարցերն ու տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված կարգով;
Պայմանագիրն իր հավելվածով կազմվում է երկու օրինակից, որից մեկը գտնվում է <<Պահպանության>>, իսկ մյուսը՝ <<Տնտմարմնի>> մոտ;

2. <<ՏՆՏՄԱՐՄՆԻ>> ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Ստեղծել անհրաժեշտ պայմաններ օբյեկտի պահպանությունը կամ նրա տարածքում հասարակական կարգի ապահովումն ըստ պատշաճի կատարելու համար փակել, կնքել /կապարակնքել _____

2.2. Միմյանցից մեծ հեռավորության վրա տեղաբաշխված ենթաօբյեկտների պահակետերը ապահովել ներքին հեռախոսային կամ այլ կապով;

2.3. <<Պահպանությանը>> 2 ամիս առաջ գրավոր տեղեկացնել պայմանագիրը միակողմանի դադարեցնելու, ինչպես նաև օբյեկտի հիմնական վերանորոգման և վերասարքավորման, սահմանված ռեժիմի, գործունեության պրոֆիլի փոփոխման կամ այնպիսի միջոցառումների անցկացման մասին, որոնց հետևանքով հնարավոր է օբյեկտի պահպանության բնույթի փոփոխություն կամ պահակետերի տեղաբաշխման անհրաժեշտություն;

2.4. <<Պահպանությանը>> անվճար հատկացնել ծառայական և օժանդակ շինություններ, գույքի, կապի միջոցներ և այլ սարքավորումներ, ինչպես նաև մատուցել կոմունալ անվճար ծառայություններ;

2.5. Առողջության համար վնասակար պայմաններում ծառայություն կատարող <<Պահպանության>> աշխատակիցներին ապահովել օբյեկտի աշխատակիցների համար օրենքով նախատեսված հավասար արտոնություններով:

3. <<ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ>> ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կազմակերպել և ապահովել <<Տնտմարմնի>> կողմից իր պահպանությանը հանձնված ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների հուսալի պահպանությունը

հափշտակումներից և վնասումից;

3.3. Ապահովել անցագրային ռեժիմի կիրառումը, եթե այդպիսին <<Տնտմարմնի>> կողմից սահմանված է;

3.3 Ապահովել <<Տնտմարմնի>> պահպանիչ-հակահրդեհային և տագնապի ազդարարման համակարգի սարքերի ու սարքավորումների հուսալի և անխափան աշխատանքը;
Շարքից դուրս եկած սարքերի ձեռք բերումը կատարվում է <<Տնտմարմնի>>, իսկ դրանց տեղադրումը, շահագործումը և սպասարկումը <<Պահպանության>> կողմից;

4. <<ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ >> ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. <<Պահպանությունը>> պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ պահպանություն չիրականացնելու հետևանքով հասցվել է <<Տնտմարմնին>>: Օբյեկտի պարիսպը, շենքերի պատերը, պահատեղերը քանդելու, դռները, լուսամուտները, ցուցափեղկերը, դրանց փականներն ու կողպեքները ջարդելու միջոցով կատարված հափշտակությամբ, գույքի ոչնչացմամբ կամ հրկիզմամբ;

4.2. <<Պահպանությունը>> պատասխանատվություն չի կրում.
ա/ տարերային աղետների հետևանքով պատճառված նյութական վնասի համար.
բ/ բանդիտական կամ ավազակային հարձակման հետևանքով պատճառված վնասի համար.
գ/ այն նյութական արժեքների ամբողջության համար, որոնք չեն գտնվում փակ շինություններում և սահմանված կարգով պահպանության հանձնված չեն եղել.
դ/ <<Տնտմարմնին>> որևէ ճանապարհով պատճառված նյութական վնասի համար, եթե սույն պայմանագրով <<Պահպանությունը>> ստանձնել է միայն հասարակական կարգի ապահովման պարտավորություն;

4.3. Նյութական վնաս պատճառելու <<Պահպանության>> մեղքի առկայությունը և հասցված վնասի չափը որոշվում է իրավասու մարմինների կողմից և փոխհատուցվում նրանց որոշումների և վճիռների հիման վրա;

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագիրը և ուժի մեջ է մտնում 01. Հունվարի 2016 թ-ից:
Եթե պայմանագրի ժամկետը լրանալուց երկու ամիս առաջ՝ կողմերից ոչ մեկը չի պահանջում լուծարում, այն համարվում է շարունակելի /նս մեկ տարի/ և ուժի մեջ մնում նախկին պայմաններով և ժամկետով;
Պայմանագրի դադարեցման, լուծարման դեպքում <<Տնտմարմինը>> 5-օրյա ժամկետում պարտավոր է ապահովել <<Պահպանության>> վարձավճարի մարումը, ինչպես նաև պահպանության դադարեցման հետ կապված բոլոր ծախսերի վճարումը;
Այս կամ այն պատճառով օբյեկտի պահպանության մասին պայմանագրի ժամկետից շուտ լուծարումը թույլ է տրվում օրենքով նախատեսված կարգով;

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ
ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ

<<ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ>>
ՀՀՈ ՊՊԳՎ Գավառի պահպանության բաժանմունք

Հաշվարկային հաշիվ
900173063018
ՀՀ Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 0840 2521

հեռախոս՝
2-20-22

ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏԻ

ծ/Պ ոստիկանության ավագ լեյտենանտ՝

Վ.Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

<<ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ>>
ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱ-ԲԱԺԱՆՄԱՆ ԱՐԽԻՎ

Հաշվարկային հաշիվը

900173515017
ՀՀ Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 084101159
հեռախոս 3-00-31

ՀՀ ԿԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

...ԱՍՐԱԹՅԱՆ